Նախագիծ

Լրամշակված տարբերակ

Երկրորդ ընթերցում

Պ-350[8]-02.08.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման կամ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են երեք տարի ժամկետով, իսկ տրամադրված լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է 5 տարի ժամկետով» նախադասությունը:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «1. **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ»** բաժինը՝

1. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4.	Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

2. 5-րդ կետում «Զենքի առևտուր» բառերից առաջ լրացնել «Քաղաքացիական և ծառայողական» բառերը.

3. լրացնել նոր՝ 12-րդ կետով.

12.	Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

4. լրացնել նոր՝ 13-րդ կետով.

13.	Հրաձգարանի գործարկում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

5. լրացնել նոր՝ 14-րդ կետով.

14.	Զենքի հարդարում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

Հոդված 3. Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը «հետո» բառից հետո լրացնել «, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» կետադրական նշանը և բառերը:

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Օրենքի 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերը ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

3. Օրենքի 3-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 26. Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան

1. Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան (այսուհետ՝ բարդ լիցենզիա) լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:
2. Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար սույն օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:
3. Բարդ լիցենզիան տրվում է անժամկետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: ~~Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման կամ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են երեք տարի ժամկետով, իսկ տրամադրված լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է 5 տարի ժամկետով:~~
4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում բարդ լիցենզիան կարող է տրվել մրցույթով, որն իրականացվում է լիցենզավորման կարգերին համապատասխան:
5. Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա:
Լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունները տրվում են սույն օրենքով և լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրություններով նախատեսված կարգով:
6. Բարդ լիցենզիաները տրվում են միայն սույն օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված գործունեության համապատասխան տեսակներով զբաղվելու համար:
(26-րդ հոդվածը լրաց. 17.09.09 ՀՕ-169-Ն)

Հոդված 43. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:
2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

Հ/հ	Լիցենզավորման ենթակա գործունեության	Լիցեն-զավորող մարմինը	***(սյունակը հանվել է 13.11.15***	Ոլորտ	Փորձա-քննու-թյան	Մրցու-թային կար-	Որակա-վորման պահանջ	Հաշվե-տվու-թյան	Վայրի պա-հանջ

	տեսակը		*ՀՕ-121-Ն)*		պահանջ	գով		պահանջ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ
3.	*(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*								
~~4.~~	~~Զենքի արտադրություն~~	~~ԿՄ~~		~~-~~	~~Փ~~	~~-~~	~~-~~	~~Հ~~	~~Վ~~
4.	Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտուր	ԿՄ		-	Փ	-	-	Հ	Վ
6.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն	ԿՄ		-	Փ		Ո	Հ	Վ
7.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

	կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր								
7.1.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործում գիտական և ուսումնական նպատակներով	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
7.2.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
7.3.	Արտադրական կանեփի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
7.4.	Արտադրական կանեփի ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
8.	Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
9.	Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
10.	Ռազմական նշանակության արտադրանքի	ԿՄ		-	-	-	-	Հ	-

	առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների մատուցում)								
11.	Մասնավոր պահնորդական գործունեություն	ԿՄ		-	-	-	Ո	-	-
12.	Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
13.	Հրաձգարանի գործարկում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
14.	Զենքի հարդարում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

Հոդված 48. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Սույն օրենքը, նրա 43-րդ հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա այն գործունեության տեսակների մասով, որոնք մինչև օրենքի ուժի մեջ մտնելու պահն օրենքի կամ իրավական այլ ակտերի համաձայն չեն համարվել լիցենզավորման

ենթակա գործունեության տեսակներ, ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրված լիցենզիաները գործում են մինչև լիցենզիաների գործողության ժամկետի ավարտը:

3. Նոր գործունեությունը լիցենզավորված կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը հրապարակվելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո:

4.1. Սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերի պահանջները չեն տարածվում միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին առնչվող գործունեության լիցենզավորման վրա:

5. Լիցենզավորման պայմանների ու պահանջների փոփոխության դեպքում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավական ուժը՝ սույն օրենքով նախատեսված ժամկետներով:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից ընդունված լիցենզավորման կարգերը գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքի պահանջներին:

Եթե սույն օրենքի համաձայն լիցենզիան պետք է տրվի լիցենզավորման կարգի համաձայն, և նման կարգ չի սահմանվել սույն օրենքով նախատեսված մարմինների կողմից, ապա նման դեպքերում մինչև համապատասխան կարգերի սահմանումը լիցենզիան տրվում է պարզ ընթացակարգով:

7. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սույն օրենքի համաձայն գործունեության առանձին տեսակները լիցենզավորող լիազորված մարմինների սահմանումը լիցենզիայի տվյալ տեսակները համարվում են չլիցենզավորվող:

8. Օրենքի 43-րդ հոդվածի 18-րդ բաժնի («Գործունեության այլ բնագավառներ») 7-րդ կետի 7.1 և 7.3 ենթակետերին համապատասխան տրված լիցենզիաները՝ թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9% սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների) ու խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության և գարեջրի արտադրության գործունեությունների մասերով մինչև 2004 թվականի հուլիսի

15-ը ենթակա են վերաձևակերպման ըստ գործունեության վայրի, որի համար օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:

9. 2004 թվականի հուլիսի 15-ից հետո սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված լիցենզիայի, ըստ գործունեության իրականացման վայրի, վերաձևակերպման համար գանձվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը:

10. Օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ բաժնի 1-ին կետով սահմանված բանկային գործունեության մասով վայրի պահանջի վերացման դրույթը տարածվում է 2003 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

(48-րդ հոդվածը լրաց. 25.12.03 ՀՕ-65-Ն, 17.09.09 ՀՕ-169-Ն)

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՁԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (*Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350^{2}-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350^{3}-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Հիդրոօդերեւութաբանական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[4]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
5.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ինկասացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[5]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
6.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[6]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
7.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[7]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
8.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[8]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
9.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[9]-02.08.2022-ՊԱ-011/1օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

10.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[10]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
11.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Պետական տուրքի մասին» Պ-350[11]-02.08.2022-ՊԱ-011/0 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
12.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[12]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
13.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[13]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
14.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[14]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**